ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

25.11.2021 11:34

Փաստաբանների պալատում տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչների՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Ալեքսիս Հաֆթվանիի և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քրեական արդարադատության բարեփոխումների ծրագրերի ղեկավար Քրիստինա Աֆոյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հանրային պաշտպանի գրասենյակում գործավարության և փաստաթղթաշրջանառության նոր հարթակի ներդնման, քրեակատարողական հիմնարկներում տեսակցությունների էլեկտրոնային հարթակ ստեղծելու անհրաժեշտության, ինչպես նաև փաստաբանության մասին օրենսդրական գործընթացների աջակցությանն առնչվող հարցեր:

Դեսպանության ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել քննարկել ներկայացված խնդիրները և հնարավորության դեպքում աջակցել դրանց լուծմանը:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })